ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N 11-20

STATE PROCUREMENT AGREEMENT
ON PROVISION OF LEGAL SERVICES
FOR STATE NEEDS
No 11-20

Պետության կարիքների համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր

State procurement agreement on provision of legal services for state needs

ք. Երևան «27» հոկտեմբերի **2020թ.**

city of Yerevan November 27, **2020**

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս վարչապետի աշխատակազմի ղեկավար Էդուարդ Աղաջանյանի, որը գործում է ՀՀ վարչապետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա,

Office of the Prime Minister of the Republic of Armenia (the "Client"), represented by Eduard Aghajanyan, Chief of Staff, acting pursuant to the charter of the Office of the Prime Minister of RA;

"LINKLATERS S.L.P." ընկերությունը, ի դեմս Գործընկեր Ֆրանցիսկո Մալագայի (այսուհետ՝ Կատարող),

"LINKLATERS S.L.P." LLC, represented by Partner Francisco Málaga (the "Contractor"),

երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի թիվ 1154-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը՝ հետևյալի մասին.

Jointly referred to as the "Parties", based on the decree N 1154-Ն of the Government of the Republic of Armenia dated July 9, 2020, signed this agreement on the following:

Հոդված 1. Հասկացությունները

1.1 Սույն Պայմանագրում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները

i. **«Պայմանագիր»՝** պետության կարիքների համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման պետական գնման սույն պայմանագիրն՝ իր բոլոր հավելվածներով և ժամանակ առ

Article 1. Definitions

1.1 The following terms used in the Agreement have the following meanings:

i. **"Agreement"** means this state procurement agreement on provision of legal services for state needs and its exhibits, as each may be amended from time to time;

ժամանակ դրանում կատարվելիք փոփոխություններով և լրացումներով,

ii. **«Պատվիրատուի ներկայացուցիչ»՝** Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը՝ Եղիշե Կիրակոսյանը,

iii. **«Կատարողի ներկայացուցիչ»՝** "LINKLATERS S.L.P." ընկերության գործընկեր Ֆրանցիսկե Մալագա,

iv. **«Հանձնման-ընդունման ակտ»՝** Կողմերի միջև ստորագրված Հանձնման-ընդունման ակտը, որը հավաստում է Կատարողի կողմից Պատվիրատուին Ծառայությունների մատուցումը՝ Հավելված Ա-ում սահմանված ձևաչափով:

v. **«Կողմ»՝** Կատարողը կամ Պատվիրատուն:

vi. **«Կողմեր»՝** Կատարողը և Պատվիրատուն միասին:

vii. **«Ծառայություններ»՝** Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության միջև կնքված թիվ T1-T2-CW-01 պայմանագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության շահերը իսպանական դատարաններում պաշտպանելու համար ծառայությունները՝ համաձայն սույն Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (Հավելված Բ) և Նամակ-համաձայնագրի (Հավելված Դ):

viii. **«Ծառայության Վճար»՝** Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների արժեքը, որը կազմում է 420,000 (չորս հարյուր քսան հազար) եվրոյին համարժեք դրամ, որը ներառում է կիրառելի հարկերը:

ix. **«Բանկային Օր»՝** Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի աշխատանքային օրը:

ii. **"Representative of the Client"** means Yeghishe Kirakosyan, Representative of the Republic of Armenia to the European Court of Human Rights;

iii. **"Representative of the Contractor"** means Francisco Málaga, Partner in "LINKLATERS S.L.P." LLC;

iv. **"Delivery Statement"** means a statement on delivery signed between the Parties, which certifies rendering Services by the Contractor to the Client, substantially in the form of Exhibit A.

v. **"Party"** means the Contractor or the Client.

vi. **"Parties"** means the Contractor and the Client collectively.

vii. **"Services"** means legal services related to the protection of the interests of the Republic of Armenia in the Spanish courts in the framework of the contract No T1-T2-CW-01 signed between the Ministry of Territorial Administration and Infrastructure of the Republic of Armenia and "Corsan Corviam Construccion, S.A." in compliance with the technical specification – procurement schedule and the engagement letter, set forth respectively by Exhibit B and Exhibit D of this Agreement.

viii. **"Service Fee"** means the price of the Services, rendered by the Contractor, which shall be equivalent EUR 420,000 (four hundred twenty thousand) in AMD, including all the applicable taxes.

ix. **"Banking Day"** means the working day of the banks, acting in the Republic of Armenia.

Հոդված 2. Պայմանագրի առարկան

2.1 Սույն Պայմանագրի պայմանների և դրույթների համաձայն՝ Կատարողը պարտավոր է մատուցել Ծառայությունները Հավելված Բ-ում սահմանված ժամկետում, իսկ Պատվիրատուն պարտավոր է վճարել Կատարողին Ծառայության Վճարը պատշաճ կերպով մատուցված Ծառայությունների դիմաց:

2.2 Կատարողը պետք է համագործակցի Պատվիրատուի հետ Ծառայությունների մատուցման ժամկետի ընթացքում:

2.3 Կատարողը Ծառայությունները մատուցում է անձամբ, բացարձակապես անկախ հիմունքներով և իր բացառիկ պատասխանատվության ներքո, և երբևէ չի գործի կամ իրեն չի համարի Պատվիրատուի գործակալ:

2.4 Կատարողը պարտավորվում է բոլոր դեպքերում ազնվաբար, ջանասիրաբար իր բոլոր հմտությունների, փորձի ու տաղանդների սահմաններում՝ սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան մատուցել Ծառայությունները:

2.5 Անհրաժեշտության դեպքում և Պատվիրատուի համապատասխան պահանջի հիման վրա Կողմերն համացանցի միջոցով կամ այլ եղանակով հանդիպումներ կկազմակերպեն, որոնց ընթացքում Կատարողը Պատվիրատուի ներկայացուցչին կհաղորդի մատուցվող Ծառայությունների կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվություն և կապահովի պատշաճ համակարգումը:

2.6 Պատվիրատուն Կատարողին տրամադրում է Կատարողի համար անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը և փաստաթղթերը, որոնք Կատարողին անհրաժեշտ են սույն Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները կատարելու համար, եթե Պատվիրատուն ունի այդպիսի տեղեկատվություն:

Article 2. Subject of Agreement

2.1 Upon the terms and subject to the conditions of this Agreement, the Contractor shall render the Services within the term, set forth by Exhibit B, and the Client shall pay the Contractor the Service Fee for properly rendered Services.

2.2 The Contractor shall cooperate with the Client due course of rendering Services.

2.3 The Contractor shall render the Services in person, in a completely independent basis and under its sole responsibility and shall never act or consider itself as an agent of the Client.

2.4 The Contractor shall, at all times, faithfully, industriously and to the best of its abilities, experience and talents, render the Services pursuant to the terms of this Agreement.

2.5 If necessary and upon the Client's request, the Parties shall hold meetings via internet or other means, during which the Contractor shall update the Representative of the Client on the status of the rendered Services and ensure proper coordination.

2.6 The Client shall provide to the Contractor all relevant information and documents that are necessary for the Contractor to perform its obligations under this Agreement, if the Client possesses such information.

Հոդված 3. Կողմերի հաստատումները և երաշխավորությունները

3.1 Պատվիրատուն Կատարողին ներկայացնում և երաշխավորում է հետևյալը՝

(a) Պատվիրատուն ունի գործունակություն, լիազորություն և օրինական իրավունք իրականացնելու և կատարելու սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները,

(b) Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի կատարումը՝

(i) չի խախտում Պատվիրատուի գործունեությունը կարգավորող կիրառելի որևէ օրենք կամ իրավական այլ ակտ, կամ

(ii) չի հակասի, խախտի որևէ պայմանագիր կամ չի հանգեցնի վերջինիս չկատարման, որի կողմ է Պատվիրատուն, բացառությամբ այնպիսի հակասության, խախտման կամ պայմանագրի չկատարման, որը նյութապես կամ բացասաբար չի ազդի Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման վրա:

3.2 Կատարողը Պատվիրատուին ներկայացնում և երաշխավորում է հետևյալը՝

(a) Կատարողը գործում է Իսպանիայի Թագավորության օրենսդրության պահանջներին համապատասխան, և

(b) Կատարողն ունի գործունակություն, լիազորություն և օրինական իրավունք իրականացնելու և կատարելու սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները,

(c) Կատարողն ունի որակավորում, հմտություններ, գիտելիք և փորձ Ծառայությունները մատուցելու համար,

(d) Կատարողի կողմից սույն Պայմանագրի կատարումը՝

(i) չի խախտի Կատարողի համար կիրառելի որևէ իրավունք կամ դատական ակտ (վճիռ), կամ

(ii) չի հակասի, չի խախտի կամ խոչընդոտ չի հանդիսանա որևէ պայմանագրի համար, որի կողմ է հանդիսանում Կատարողը, բացառությամբ այդպիսի

Article 3. Representation and Warranties

3.1 The Client represents and warrants to the Contractor as follows:

(a) The Client has full power, authority, and legal right to execute and deliver this Agreement and to perform its obligations under it;

(b) the Client's execution of this Agreement won't

(i) violate any law or any legal act applicable to the Client; or

(ii) conflict with, breach, or constitute a default under any contract to which the Client is a party except for any such conflict, breach or default that would not materially and adversely affect the Client's ability to fulfill its obligations under this Agreement.

3.2 The Contractor represents and warrants to the Client as follows:

(a) The Contractor acts under the laws of the Kingdom of Spain; and

(b) The Contractor has full power, authority, and legal right to execute and deliver this Agreement and to perform its obligations under it;

(c) The Contractor has qualification, skills, knowledge and experience to render the Services;

(d) the Contractor's execution of this Agreement won't:

(i) violate any law or Order applicable to the Contractor; or

(ii) conflict with, breach, or constitute a default under any contract to which the Contractor is a party except for any such conflict, breach or default that would not materially and adversely

որևէ հակասության, խախտման, կամ խոչընդոտի, որը նյութապես կամ բացասաբար չի ազդի Կատարողի կողմից սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների վրա:

(e) Կատարողից չի պահանջվում՝

(i) ստանալ որևէ համաձայնություն կամ թույլտվություն որևէ անձից;

(ii) որևէ կերպ նշանակվել որևէ անձի կողմից, կամ

(iii) հայտարարել կամ դիմել որևէ անձի կապված իր կողմից սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման հետ:

affect the Contractor's ability to fulfill its obligations under this Agreement.

(e) The Contractor is not required to:

(i) obtain any consent or permit,

(ii) obtain any designation from, or

(iii) declare or file with,

any person in connection with the performance of its obligations under this Agreement.

Հոդված 4. Ծառայությունների հանձնում-ընդունումը

4.1 Կատարողի կողմից Ծառայությունների փոխանցումը և Պատվիրատուի կողմից դրանց ընդունումն իրականացվում է Հանձնման-ընդունման ակտի հիման վրա 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝

4.1.1 Կատարողի կողմից ստորագրված Հանձնման ընդունման ակտի ստացման օրվանից, եթե Պատվիրատուն չունի դրա հետ կապված առարկություններ, կամ

4.1.2 փոփոխված Հանձնման-ընդունման ակտի ստացման օրվանից, եթե Պատվիրատուն դրա հետ կապված առարկություններ է հայտնել:

4.2 Պատվիրատուն ունի բացառիկ իրավունք Կատարողի կողմից կազմված կամ Կատարողի մոտ սույն Պայմանագրով Ծառայությունների մատուցման նպատակով առկա փաստաթղթերի, հաշվետվությունների և նյութերի բոլոր բնօրինակների և պատճենների նկատմամբ: Կատարողը Պատվիրատուի պահանջով անմիջապես վերադարձնում է բոլոր այդպիսի փաստաթղթերը, հաշվետվությունները և նյութերը:

4.3 Հանձնման-ընդունման ակտը համարվում է ամբողջական, եթե դրան կից ներկայացվում է յուրաքանչյուր պատասխանատու անձի կողմից կատարված

Article 4. Delivery and acceptance of the Services

4.1 Transfer of the Deliverables by the Contractor and its acceptance by the Client shall be done based on the Delivery Statement within fifteen (15) working days:

4.1.1 from the time of receipt of the Delivery Statement, if the Client does not object to the statement; or

4.1.2 from the time of receipt of the amended Delivery Statement, if the Client objects to the statement.

4.2 The Client has exclusive rights to all original and copy of documents, reports and materials drafted by the Contractor or were under the possession of the Contractor for rendering the Services under this Agreement. The Contractor shall return to the Client all such documents, reports and materials immediately upon request of the Client.

4.3 The Delivery Statement shall be deemed complete, if it is accompanied by a breakdown of all billable tasks performed by each timekeeper, and specify the date of

վճարման ենթակա բոլոր առաջադրանքների բաշխվածքը՝ նշելով վճարման ենթակա յուրաքանչյուր առաջադրանքի ամսաթիվը և կիրառելի ժամադրույքը:

each billable task and the applicable hourly billing rate.

Հոդված 5. Ծառայության վճարը, Ծառայության դիմաց վճարման կարգը և Ծախսերը

5.1 Սույն Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության վճարը կազմում է 420 000 (չորս հարյուր քսան հազար) Եվրոյին համարժեք ՀՀ դրամ, որի վճարումը կատարվում է հետևյալ կարգով

5.1.1 Ծառայության վճարից՝ մինչև 50,000 (հիսուն հազար) Եվրոյին համարժեք ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ հաշվարկային փաստաթուղթը (հարկային հաշիվ) ներկայացվելու օրվանից 30 (երեսուն) Բանկային օրվա ընթացքում: Կանխավճարի մարումն իրականացվում է վերջնական Հանձնման-ընդունման ակտի հիման վրա կատարվող վճարումից նվազեցում (պահում) կատարելու ձևով:

5.1.2 Ծառայության վճարի մնացած մասի վճարումը կատարվում է Կողմերի կողմից ստորագրված Հանձնման-ընդունման արձանագրության և Կատարողի կողմից ներկայացված հաշվարկային փաստաթղթի հիման վրա՝ Կողմերի կողմից Հանձնման-ընդունման արձանագրությունը երկուստեք ստորագրվելու և Կատարողի կողմից հաշվարկային փաստաթղթերը (հարկային հաշիվը և ժամաթերթերը) ներկայացվելու օրվանից 30 (երեսուն) Բանկային օրվա ընթացքում: Եթե Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է տվյալ ամսվա 20-ից հետո և Ծառայությունների վճարման ժամանակացույցով (Հավելված Գ) նախատեսված են ֆինանսական

Article 5. Service fee, Payments and Expenses

5.1 Pursuant to this Agreement, the Service Fee is equivalent EUR 420,000 (four hundred twenty thousand) in AMD, which is payable as follows:

5.1.1 A prepayment up to equivalent EUR 50,000 (five thousand) in AMD, out of the Service fee, shall be transferred to the Contractor's bank account within 30 (thirty) Banking days upon submission of the billing document (invoice). The prepayment shall be deducted from the amount payable based on the last Delivery Statement.

5.1.2 The remainder of the Service fee shall be paid based on the Delivery Statement signed by the Parties and the billing documents submitted by the Contractor within 30 (thirty) Banking days after execution of the Delivery Statement by both Parties and submission of the billing documents (invoice and timesheets) by the Contractor. If the Delivery Statement is signed after 20th of the respective month and if financial means for the said month are allocated in compliance with the payment schedule (Exhibit C), the payment shall be carried out within 30 (thirty) Banking days but no later than until December 20 of that year.

միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 30 (երեսուն) Բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5.2 Պայմանագրով սահմանված Ծառայության վճարի որոշման համար հիմք է հանդիսանում Պայմանագրի Հավելված Բ-ում սահմանված ծառայության յուրաքանչյուր տեսակի համար սահմանված արժեքը: Կատարողն ու Պատվիրատուն իրավունք չունեն պահանջել ավելացնելու Հավելված Բ-ում սահմանված Ծառայության վճարները:

5.3 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5.4 Պատվիրատուն կարող է վիճարկել Ծառայությունների շրջանակը և (կամ) որակը՝ հրաժարվելով Հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց Պայմանագրի 4.1 կետում սահմանված ժամկետում իր հիմնավորված պատճառաբանությունը Կատարողին ներկայացնելով:

5.5 Կատարողին վճարումը կատարված է համարվում այն պահից, երբ Պատվիրատուն համապատասխան հրահանգ է տալիս իր բանկին:

5.6 Ծառայությունների վճարը ներառում է Կատարողի բոլոր ծախսերը, որոնք ենթակա չեն հավելյալ փոխհատուցման, բացառությամբ՝ անհրաժեշտության դեպքում Կատարողի կողմից Պատվիրատուի համաձայնությամբ ներգրավված փորձագետների ծառայության վճարների, Կատարողի ներկայացուցիչների, ինչպես նաև փորձագետների, վկաների կողմից Ծառայությունների մատուցման ընթացքում ի հայտ եկած ճանապարհածախսի և գիշերակացի, փոստային ծառայությունների վճարների, թարգմանությունների, դատական գործակալի վճարների հետ կապված ծախսերը, որոնք ուղղակիորեն վճարվում են կամ ենթակա են փոխհատուցման Պատվիրատուի կողմից գրավոր (էլեկտրոնային եղանակով) նախապես հաստատվելուց հետո:

5.2 The Service Fee, set forth by the Agreement, is determined based on the price of the services of each type, set out in Exhibit B of this Agreement. The Contractor and the Client are not entitled to require increasing the fees for the Services, set out in Exhibit B.

5.3 The Client shall pay for the rendered Services via bank transfer, through transferring the amount to the Contractor's bank account.

5.4 The Client may object the scope of Services and (or) quality thereof, through rejecting to sign the Delivery Statement and submitting a grounded refusal to the Contractor within the term set forth by clause 4.1 of the Agreement.

5.5 The payment to the Contractor is deemed to be made from the time when the Client gives respective order to its bank.

5.6 The Service Fee comprises all expenses of the Contractor that are not subject to additional compensation, except for the service fee of the experts involved with the Client's consent, the travel expenses and costs related to accommodation incurred by the representatives of the Contractor, as well as the experts, witnesses, postage prices, translation and court agent expenses, if necessary, which the Client shall bear and pay separately or reimburse provided that these expenses have been confirmed by the Client in advance in writing (via email).

Հոդված 6. Տեղեկատվության սեփականություն, գաղտնիություն

6.1 Կատարողն ընդունում է, որ սույն Պայմանագրի շրջանակներում իրականացվող գործունեության ընթացքում Պատվիրատուի և/կամ վերջինիս գործունեության վերաբերյալ Կողմերի միջև կարող է շրջանառվել գաղտնի տեղեկատվություն: Կատարողը պարտավոր է ցանկացած նման տեղեկատվություն պահել գաղտնի Պայմանագրի ընթացքում և դրա լուծումից հետո: Կատարողը պարտավոր է նման տեղեկատվությունը չօգտագործել սույն Պայմանագրից բացի այլ նպատակներով:

6.2 Կատարողը կարող է բացահայտել այդպիսի գաղտնի տեղեկատվությունը գործընկերներին (շահագրգիռ կողմերին) միայն Պատվիրատուի գրավոր համաձայնությամբ:

6.3 Նման տեղեկատվությունը ներառում է, սակայն չի սահմանափակվում բոլոր փաստաթղթերը, նկարները, բանաձևերը, նկարագրությունները, գրքերը, ծրագրերը, ցուցումների գրքույկները, առօրյա հաշվետվությունները, նիստերի արձանագրությունները, ամսագրերը և հաշիվները, գործարարական և առևտրային գաղտնիքները, բանավոր և գրավոր տվյալները, որոնք վերաբերում են Պատվիրատուի անցյալ, ներկա և ապագա գործունեությանը, մեթոդներին, հնարքներին կամ որևէ առնչություն ունեն «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության և ՀՀ-ի մասնակցությամբ արբիտրաժային և (կամ) դատավարական գործընթացներին:

6.4 Կատարողը պարտավորվում է պահպանել, առանց սահմանափակման, բոլոր տեղեկությունների, տվյալների, փաստաթղթերի և գործարքների վերաբերյալ գաղտնիությունը, եթե օրենքի և/կամ Պատվիրատուի ցուցումների համաձայն դրանք համարվում են գաղտնի:

Article 6. Ownership of Information, Confidentiality

6.1 The Contractor acknowledges that during the course of rendering the Services within the framework of this Agreement confidential information regarding the Client and/or its activities may be exchanged between the Parties. The Contractor shall keep secret and confidential all such information during the course of the Agreement and after the termination of this Agreement. The Contractor shall not use such information other than for this Agreement.

6.2 The Contractor may reveal such confidential information to partners (stakeholders) only upon written consent of the Client.

6.3 Such information includes but is not limited to all drawings, formula, specifications, books, software, instruction manuals, daily reports, minutes of meetings, journals and accounts, business and trade secrets, oral or written data, information, whether concerning the former, existing or future activities, methods, techniques or relating to the arbitration and (or) judicial proceedings with the participation of Republic of Armenia and "Corsan Corviam Construccion, S.A.".

6.4 The Contractor shall, without limitation, keep all the information, data, documents and deals confidential, if according to the law and/or directions of the Client they are considered as confidential.

Հոդված 7. Պատասխանատվությունը

7.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների մատուցման հետ

Article 7. Liability

7.1 The Contractor is liable for the breach of its duties related to rendering the Services

կապված իր պարտավորությունների խախտման կամ ոչ պատշաճ կատարման համար: Վերջինս ներառում է նաև Պատվիրատուի ողջամիտ հրահանգները չկատարելը կամ Պատվիրատուի հարցումներին/ նամակներին չպատասխանելը, մասնավորապես՝

7.1.1 իր պարտավորությունների չկատարման համար Կատարողը պարտավոր է վերադարձնել իրեն վճարված ցանկացած գումար, Պատվիրատուի պահանջով վճարել տուգանք Ծառայության վճարի 0,5%-ի չափով, ինչպես նաև—հատուցել Պատվիրատուի կատարած ծախսերը և վնասները՝ իրական վնասը և բաց թողնված օգուտը,

7.1.2 Ոչ պատշաճ կամ ոչ ամբողջական Ծառայությունների մատուցման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից պահանջել վճարել տուգանք Ծառայության վճարի 0,5%-ի չափով, ինչպես նաև Ծառայության վճարը վճարել համամասնորեն պակասեցված մասով:

7.2 Սույն Պայմանագրով սահմանված իրենց մնացյալ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3 Կատարողի ընդհանուր պարտավորությունը Պատվիրատուի առջև սահմանափակվում է 25 (քսանհինգ) միլիոն ֆունտ ստերլինգին համարժեք ՀՀ դրամով՝ Կատարողի Ծառայությունների հետ կապված գործարքներից բխող կամ դրանց հետ կապված բոլոր կորուստների, պարտավորությունների, վնասների, ծախսերի, կամ պահանջների (միասին՝ «Կորուստներ») մասով, ներառյալ այն Կորուստները, որոնք առաջացել են պայմանագիրը կամ կանոնադրական պարտավորությունը խախտելու, անփութության կամ ցանկացած այլ գործողության կամ անգործության հետևանքով՝ անկախ նրանից, թե դրանք ինչպես են պատճառվել, բացառությամբ խարդախության,

or non-performance thereof in a proper manner, including non-conformity with the requests of the Client or not answering the questions/messages of the Client. In particular:

7.1.1 for non-performance of its obligations the Contractor shall return any and all Service Fees paid to it, upon the Client's request to pay a penalty of 0,5% of the Service fee, as well as reimburse for all the expenses and damages (actual damages and income not received) incurred by the Client;

7.1.2 In case of rendering improper or incomplete Services the Client may require from the Contractor to pay a penalty of 0,5% of the Service fee as well as the Client proportionally reduce the respective part of the Service Fee and pay to the Contractor proportionally reduced Service Fee.

7.2 The Parties shall be liable for full or partial non-performance of their other obligations set forth in this Agreement according to the laws of the Republic of Armenia and in consideration of para. 7.3 hereof.

7.3 The aggregate liability of the Contractor to the Client shall be limited to equivalent £25 (twenty-five) million in AMD in respect of all losses, liabilities, damages, costs, expenses or claims (collectively "losses") arising out of or in connection with the Contractor's services in relation to each transaction howsoever caused, including arising as a result of breach of contract or statutory duty, negligence or any other act or omission but excluding liability for fraud, willful default, personal injury, or gross negligence, for which the Contractor will have unlimited liability. Accordingly, the Contractor will have no liability in respect of any such losses after the Contractor (or any person on

պարտավորությունը դիտավորյալ չկատարելու, անձնական վնասվածքի կամ կոպիտ անփութության համար պատասխատվության, որի համար Կատարողը կրում է անսահմանափակ պատասխանատվություն: Ըստ այդմ, Կատարողը պատասխանատվություն չի կրում որևէ նման Կորստի համար այն բանից հետո, երբ Կատարողը (կամ նրա անունից որևէ անձ) վճարել է ընդհանուր 25 (քսանհինգ) միլիոն ֆունտ ստեռլինգին համարժեք ՀՀ դրամ (ներառյալ չվճարված վճարների դիմաց թույլատրված ցանկացած գնիջեցում) այդ Կորուստների և/կամ այլ նման կորուստների համար:

its behalf) has paid out the equivalent amount of £25 (twenty-five) million in AMD in aggregate (including any discounts allowed against unpaid fees) in respect of any such losses and/or other such losses.

Հոդված 8. Պայմանագրի ժամկետը և դադարեցումը

8.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման օրվանից և գործում է մինչև Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ և ամբողջությամբ կատարելը: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441 (2) հոդվածի, սույն Պայմանագրի դրույթները կիրառվում են 2020 թվականի հունիսի 9-ից Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ: Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև Պայմանագիրը կնքելը Կատարողի կողմից մատուցված Ծառայությունների դիմաց վճարումը իրականացվում է Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

Article 8. Term of the Agreement and Termination

8.1 The Agreement shall take effect upon its signing by the Parties and shall remain in full force until full and proper completion of the obligations by the Parties, set forth by the Agreement. Pursuant to the Article 441 (2) of the RA Civil Code, the provisions of this Agreement shall also apply to the relationship between the Parties, which arose starting from June 9, 2020. The provisions of the Agreement shall apply to the actual relationship between the Parties, which arose prior to conclusion of the Agreement. The payments for the Services rendered prior to conclusion of the Agreement shall be processed, provided that the Agreement has been registered by the Ministry of Finance of the RA.

8.2 Պայմանագիրը կարող է դադարեցվել Պատվիրատուի և Կատարողի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

8.3 Պատվիրատուն կարող է վաղաժամկետ դադարեցնել սույն Պայմանագիրը՝

(i) առանց պատճառի, պայմանով, որ Կատարողն այդ մասին գրավոր (էլեկտրոնային եղանակով) ծանուցում է

8.2 This Agreement may be terminated by mutual written consent of the Client and the Contractor.

8.3 The Client may early terminate this Agreement:

(i) without cause provided that the Contractor has been notified at least 30 (thirty) calendar days prior to the

ստացել առնվազն 30 (երեսուն) օրացուցային օր առաջ և ստացել է դրանից բխած փաստացի ծախսերի փոխհատուցումը,

(ii) պայմանով, որ Կատարողը խախտել է Պայմանագրով սահմանված գաղտնիության մասին պարտավորությունը կամ որևէ այլ պարտավորություն և այդ մասին Կատարողը ծանուցվել է գրավոր կերպով (էլեկտրոնային եղանակով): Այդ դեպքում Պատվիրատուն կարող է Կատարողից պահանջել վնասի (իրական վնասների և բաց թողնված օգուտի) փոխհատուցում, ինչպես նաև փաստացի վճարված գումարի վերադարձ,

(iii) պայմանով, որ սույն Պայմանագրի 3.2 կետով սահմանված Կատարողի ներկայացումներն ու երաշխիքները սույն Պայմանագրի կնքման կամ կատարման օրվա դրությամբ ճշմարիտ ու ճշգրիտ չեն իրենց բոլոր էական տեսանկյուններից և որ Կատարողը այդ մասին գրավոր (էլեկտրոնային եղանակով) ծանուցում է ստացել:

8.4 Կատարողը կարող է վաղաժամկետ դադարեցնել սույն Պայմանագիրը՝

(i) առանց պատճառի, պայմանով, որ Պատվիրատուն այդ մասին գրավոր (էլեկտրոնային եղանակով) ծանուցում է ստացել առնվազն 30 (երեսուն) օրացուցային օր առաջ, ստացել է դրանից բխած փաստացի ծախսերի (իրական վնասների և բաց թողնված օգուտի) փոխհատուցումը և չմատուցված Ծառայությունների դիմաց Պատվիրատուի կողմից կատարված կանխավճարները,

(ii) պայմանով, որ Պայմանագրի 3.1 կետով սահմանված Պատվիրատուի ներկայացումներն ու երաշխիքները Պայմանագրի կնքման կամ կատարման օրվա դրությամբ

termination date in writing (via email) and has been reimbursed the actual expenses incurred by the Contractor;

(ii) provided that Contractor violates its obligation of confidentiality or any other obligation set forth by this Agreement and the Contractor has been notified in writing (via email). In such a case the Client may claim damages (actual damages and lost profit) from the Contractor, as well as refund of the paid amounts;

(iii) provided that any of Contractor's representations and warranties set forth in clause 3.2 of this Agreement is not true and correct in all material respects as of the date of this Agreement or performance of the Agreement, and the Contractor has been notified in writing (via email).

8.4 The Contractor may early terminate this Agreement:

without cause, provided that the Client has been notified at least 30 (thirty) calendar days prior to the termination date in writing (via email), has been reimbursed all the damages (actual damages and lost profit), as well as has received the prepayments made by the Client;

provided that any of Client's representations and warranties set forth in article 3.1 of this Agreement is not true and correct in all material respects as of the date of this Agreement or

ճշմարիտ ու ճշգրիտ չեն իրենց բոլոր էական տեսանկյուններից և որ Պատվիրատուն այդ մասին գրավոր (էլեկտրոնային եղանակով) ծանուցում է ստացել;

performance of this Agreement and the Client has been notified in writing (via email).

8.5 Սույն Պայմանագրի դադարեցման ժամկետն է՝

(i) սույն Պայմանագրի 8.2 կետի համաձայն՝ Կողմերի գրավոր փոխհամաձայնության գալու օրը,

(iii) դադարեցման մասին ծանուցում ուղարկելու օրը՝ տրված սույն Պայմանագրի 10.1 կետի համաձայն՝ սույն Պայմանագրի դադարեցման մասին 8.3(ii), 8.3(iii) և 8.4(ii) կետերով սահմանված դեպքերում, կամ

(v) դադարեցման մասին ծանուցում ուղարկելուց հետո երեսուներորդ օրացուցային օրը՝ տրված սույն Պայմանագրի 10.1 կետի համաձայն, եթե սույն Պայմանագրի 8.3(i) կամ 8.4(i) կետերի համաձայն դադարեցման դեպքերում այդ ծանուցման միջոցով չի նախատեսվում ավելի երկար դադարեցման ժամկետ:

8.5 The effective date of termination of this Agreement:

(ii) in accordance with clause 8.2 of this Agreement is the date of the mutual written consent of the Parties;

(iv) the date of notice of termination, given in accordance with clause 10.1 of this Agreement, in the cases of termination pursuant to clauses 8.3(ii), 8.3(iii) and 8.4(ii) of this Agreement; or

(vi) thirtieth calendar day after the date of notice, given in accordance with clause 10.1 of this Agreement, unless longer termination date is provided by that notice, in the cases of termination pursuant to clauses 8.3(i) or 8.4(i) of this Agreement.

8.6 Սույն Պայմանագրի դադարեցումը չի ազատում Կողմին մինչև այդ դադարեցումը թույլ տրված որևէ պայմանավորվածության կամ համաձայնության խախտման համար պատասխանատվությունից, որը ներառված է սույն Պայմանագրում այդպիսի Կողմի համար:

8.6 Termination of this Agreement does not exempt the Party from liability for breach, prior to such termination, of any covenant or agreement of such Party contained in this Agreement.

Հոդված 9. Կիրառելի իրավունքը և վեճերի լուծման կարգը

9.1 Սույն Պայմանագիրը և դրա հետ կապված կամ դրանից բխող որևէ արտապայմանագրային պարտավորություն կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9.2 Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կողմերի միջև ծագած

Article 9. Governing Law and Dispute Resolution

9.1 This Agreement and any non-contractual obligations arising out of or in connection with it are governed by the laws of the Republic of Armenia.

9.2 The disputes arising between the Parties shall be settled in court in accordance with the procedure set forth by the RA

վեճերը ենթակա են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

legislation. The resolution of the disputes arising between the Parties shall be referred to the First instance court of general jurisdiction of Yerevan.

Հոդված 10. Այլ դրույթներ

10.1 Սույն Պայմանագրով բոլոր ծանուցումները, հարցումները և այլ հաղորդակցումը պետք է լինի գրավոր կամ էլեկտրոնային եղանակով և համարվեն ստացված, եթե առաքվել են անձամբ, կամ փոստով՝ գրանցված ու վավերացված փոստի (կպահանջվի ստացական) կամ ստորև նշված էլեկտրոնային փոստի հասցեով Կողմերին, հետևյալ հասցեներով (կամ Կողմի այդպիսի մեկ այլ հասցեով, որը կսահմանվի նմանօրինակ ծանուցման միջոցով).

(i) Պատվիրատուի դեպքում՝
Պատվիրատուի ներկայացուցիչ
Հասցե՝ Երևան 0010, Կառավարական տուն N 1
Էլ. հասցե՝ yeghishe.kirakosyan@gov.am

(ii) Կատարողի դեպքում՝
Կատարողի ներկայացուցիչ
Հասցե՝ Փ. Ալմագրո 40, 28010, Մադրիդ
Էլ. հասցե՝ francisco.malaga@linklaters.com

10.2 Կողմերը ստանձնում են պարտավորություն իրենց փոստային և (կամ) էլեկտրոնային հասցե(ներ)ի փոփոխության դեպքում գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ծանուցել մյուս կողմին: Սույն կետում սահմանված պարտավորության խախտման դեպքում բացասական հետևանքների ռիսկը կրում է նշված պարտավորությունը խախտած կողմը, իսկ փոստային և (կամ) էլեկտրոնային եղանակով ուղարկված նամակը համարվում է ստացված այն հասցե(ներ)ով ուղարկվելու դեպքում, որի (որոնց) մասին Կողմը վերջին անգամ ծանուցվել է:

10.3 Կողմերի միջև ամբողջական համաձայնությունը կազմում են սույն

Article 10. Miscellaneous

10.1 All notices, requests and other communications hereunder shall be in writing or via email and shall be deemed given if delivered personally, or mailed by registered or certified mail (return receipt requested) to the Parties at the following addresses (or at such other address for a Party as shall be specified by like notice):

(i) If to the Client, to:
Representative of the Client
Address: 1, Government House, Yerevan, RA
Email address: yeghishe.kirakosyan@gov.am

(ii) If to the Contractor, to:
Representative of the Contractor
Address: Calle Almagro, 40, E-28010, Madrid
Email address: francisco.malaga@linklaters.com

10.2 The Parties undertake to inform in writing or via email the other Party about any changes related to postal mail and (or) email address(es) thereof Should any of the Parties fail to comply with the obligation, set forth herein, the risk of negative consequences shall bear the breaching Party, and the letter sent via mail and (or) email shall be deemed duly delivered provided that it has been sent to the latest mail and (or) email addresses, the other Party has been notified about.

10.3 The entire agreement between the Parties shall be constituted of this Agreement

Պայմանագիրը (ներառյալ սույն Պայմանագրի հավելվածները) և Կատարողի՝ միջազգային բիզնեսի կանոնները: Եթե հակասություններ են առաջանում մի կողմից սույն Պայմանագրի դրույթների, իսկ մյուս կողմից՝ սույն Պայմանագրի հավելվածների և/կամ Կատարողի՝ միջազգային բիզնեսի կանոնների միջև, ապա գերակայում է սույն Պայմանագիրը: Կողմերի միջև ամբողջական համաձայնությունը փոխարինում է Կողմերի միջև սույն Պայմանագրի առարկայի վերաբերյալ գրավոր և բանավոր այլ պայմանագրերին և փոխհամաձայնություններին: Պատվիրատուն կամ Կատարողը կարող են սույն Պայմանագրով նախատեսված ցանկացած իրավունքներ և պարտականություններ փոխանցել միայն մյուս կողմի նախնական գրավոր համաձայնության դեպքում:

(including its exhibits) and Contractor's International Terms of Business (ITоB). In case of discrepancy between the provisions of this Agreement, on the one hand, and this Agreement's exhibits and/or Contractor's ITоB, on the other hand, the former shall prevail. The entire agreement shall supersede all other agreements and understandings, both written and oral, between the Parties with respect to the subject matter hereof. The Client or the Contractor may assign any of its rights and obligations under this Agreement only upon prior written consent of the other party.

10.4 Պատվիրատուն կարող է ժամանակ առ ժամանակ իր գործունեության տնօրինման ընթացքում անհրաժեշտություն ունենալ մշակելու թե՛ անձնական տվյալները, և թե՛ գաղտնի անձնական տվյալները՝ Կատարողի հետ առնչվելիս: Սույնով Կատարողը համաձայնում և ընդունում է, որ այդ տեղեկատվությունը բացառապես կօգտագործվի ու կմշակվի Պատվիրատուի գործունեության իրականացման համար և գրավոր համաձայնում է Պատվիրատուի կողմից այդպիսի տվյալների մշակմանը:

10.4 The Client may from time to time in the course of administering its activities need to process both personal data and sensitive personal data in relation to the Contractor. The Contractor agrees and acknowledges that this information will be used and processed solely for the operation of the Client's activities and shall consent in writing to the processing of such data by the Client.

10.5 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե

10.5 Where as a result of control or supervision over compliance with the requirements of the Law or as a result of examination of the appeals as prescribed by law it is concluded that in the procurement process, prior to the conclusion of the Agreement, the Contractor had submitted false documents (information and data) or the decision on declaring the Contractor a selected bidder does not comply with the legislation of the Republic of Armenia, the Client shall upon the emergence of these grounds be entitled to unilaterally rescind the Agreement where pursuant to the legislation

արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

of the Republic of Armenia on procurement the detected deficiencies, having emerged prior to the conclusion of the Agreement, would have constituted a ground for not concluding the Agreement. Moreover, the Client shall not bear the risk of losses or lost profit of the Contractor as a result of unilateral rescission of the Agreement, and the latter shall be obliged to compensate for the losses suffered by the Client through its fault as prescribed by the law of the Republic of Armenia and to the extent to which the Agreement has been rescinded.

10.6 Սույն Պայնանագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով:

10.6 This Agreement is made in Armenian and English.

10.7 Սույն Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

10.7 This Agreement is made in two copies, of equal legal force, one for each Party.

10.8 Բացառությամբ օրենքով պահանջվող դեպքերի, Կողմերից ցանկացածը պարտավոր է զերծ մնալ սույն Պայմանագրի կամ սույն Պայմանագրով նախատեսված գործարքի մասին հայտարարություն անելուց՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության, իսկ մյուս Կողմը զերծ է մնում այդպիսի համաձայնության անհիմն չտրամադրումից:

10.8 Except as required by law, either Party shall refrain from making announcement of this Agreement or the transaction contemplated hereby without the written consent of the other Party, and the other Party shall refrain from unreasonably withholding such consent.

10.9 Եթե սույն Պայմանագրում օգտագործվող որևէ եզրույթ, դրույթ, պայման կամ սահմանափակում պարզվում է անվավեր, ապօրինի կամ ուժը կորցրած որևէ օրենսդրությամբ, ապա որևէ օրենսդրությամբ վավերականությունը, մնացած եզրույթները, դրույթները, պայմանները կամ սահմանափակումները մնում են օրինական, վավեր և կիրառելի:

10.9 In case any term, provision, covenant or restriction contained in this Agreement is held to be invalid, illegal or unenforceable in any jurisdiction, the validity, the remaining terms, provisions, covenants or restrictions contained herein, and of such term, provision, covenant or restriction in any other jurisdiction, shall remain legal, valid and enforceable.

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՈՇԱՐԱԴՐՅԱԼԻ՝ Կողմերը կնքում են սույն Պայմանագիրն իրենց լիազոր ներկայացուցիչների միջոցով վերոհիշյալ ամսաթվին:

IN WITNESS WHEREOF, the parties have executed this Agreement as of the date set forth above through their authorized representatives.

Հոդված 11. Կողմերի ստորագրությունները և վավերապայմանները	Article 11. Signatures and Requisites of the Parties

Պատվիրատու՝
Client:
ՀՀ վարչապետի աշխատակազմ
The Office of the Prime Minister of the Republic of Armenia
ՀՀ ՓՆ Գործառնական վարչություն / Operational Department of MFA, RA
ՀՎՀՀ/ N/A: 900011034056

Աշխատակազմի ղեկավար՝ Էդուարդ Աղաջանյան
Chief of Staff: Eduard Aghajanyan

Կատարող՝
Contractor:
"LINKLATERS S.L.P.'' ընկերություն
" LINKLATERS S.L.P." LLC
Բանկ՝ / Bank: Caixabank, S.A.
ՀՎՀՀ՝ / AN: 2100 9194 1622 0097 0413
Swift Code: CAIXESBBXXX
IBAN: ES65

Գործընկեր՝ Ֆրանցիսկո Մալագա
Partner: Francisco Málaga

ՀԱՎԵԼՎԱԾ Ա
N 11-20 պետության կարիքների համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

EXHIBIT A
to the state procurement agreement N 11-20 on provision of legal services for state needs

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ

FORM OF DELIVERY STATEMENT

Ամսաթիվը՝ [27.11.2020թ]

Date: [27.11.2020]

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը («Պատվիրատու»), մի կողմից, և **"LINKLATERS S.L.P." ընկերությունը** («Կատարող»), մյուս կողմից,

Հիմք ընդունելով Կողմերի միջև կնքված թիվ _____ պայմանագիրը («Պայմանագիր»), կնքում են սույն ակտը՝ հետևյալի վերաբերյալ.

Պայմանագրով սահմանված եզրույթներն ունեն նույն իմաստը սույն Հանձնման-ընդունման ակտում, եթե այլ իմաստ չեն ստացել ըստ սույն Հանձնման-ընդունման ակտի:

Սույն Հանձնման-ընդունման ակտը ստորագրելով՝ Պատվիրատուն և Կատարողը հաստատում են, որ

(ա) Կատարողի կողմից պատշաճ մատուցվել են Պայմանագրով սահմանված ստորև ներկայացված ծառայությունները.

/-------/

(բ) Ծառայությունների արժեքը կազմում է /-------/ եվրոյին համարժեք դրամ, որը ներառում է բոլոր կիրառելի հարկերը:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՈՇԱՐԱԴՐՅԱԼԻ, Կողմերը կատարել և ներկայացրել են սույն Հանձնման-ընդունման ակտը վերոնշյալ ամսաթվով:

The Office of the Prime Minister of the Republic of Armenia (the "Client"), on the one hand, and

"LINKLATERS S.L.P." LLC (the "Contractor"), on the other hand,

based on the agreement N _____ (the "Agreement"), execute this statement on the following:

Terms defined in the Agreement have the same meaning in this Delivery Statement unless given a different meaning in this Delivery Statement.

By executing this Delivery Statement, the Client and the Contractor confirm that:

(a) The following Services, set forth by the Agreement, have been duly provided by the Contractor:

/-------/

(b) The Service Fee is EUR /------/ equivalent in AMD, including all the applicable taxes.

IN WITNESS WHEREOF, the Parties have executed and delivered this Delivery Statement on the date set forth above.

Պատվիրատու՝
Client:
ՀՀ վարչապետի աշխատակազմ
The Office of the Prime Minister of the Republic of Armenia

Աշխատակազմի ղեկավար՝ Էդուարդ Աղաջանյան
Chief of Staff: Eduard Aghajanyan

Կատարող՝
Contractor:
"LINKLATERS S.L.P.'' ընկերություն
" LINKLATERS S.L.P." LLC
Բանկ՝ / Bank: Caixabank, S.A.
Հ/Հ՝ / AN: 2100 9194 1622 0097 0413
Swift Code: CAIXESBBXXX
IBAN: ES65

Գործընկեր՝ Ֆրանցիսկո Մալագա
Partner: Francisco Málaga

ՀԱՎԵԼՎԱԾ Բ

N 11-20 պետության կարիքների համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

եվրո

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /եվրո	ընդհանուր քանակը	մատուցման	
						Հասցեն	Ժամկետը
1	79141100	Իսպանական դատարաններում ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության շահերը հետևյալ շրջանակներում. 1. զուգահեռ ընթացող երկու վարույթներում՝ արբիտրաժային գործի և սնանկության վարույթի շրջանակներում ռազմավարության վերաբերյալ խորհրդատվության տրամադրում. *ծառայությունների արժեքի առավելագույն-նվազագույն սահմանաչափը՝ 10,000-20,000 եվրո* 2. արբիտրաժային վճռի ճանաչում Իսպանիայի Թագավորությունում. *ծառայությունների արժեքի առավելագույն-նվազագույն սահմանաչափը՝ 30,000-50,000 եվրո* 3. Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության միջև կնքված թիվ T1-T2-CW-01 պայմանագրի լուծման շուրջ հարուցված հայցի դեմ պաշտպանություն և բանկային երաշխիքների վերադարձ. *ծառայությունների արժեքի առավելագույն-նվազագույն սահմանաչափը՝ 120,000-160,000 եվրո*	եվրո	420,000	1	Եվրոպայի Միություն, Բրյուսելի վարչական մարզ	Ընթացիկ վեցամսյակ ընդհանուր մինչև 2020 թվականի դեկտեմբեր

		4. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության շահերի լիիրավ ներկայացուցչություն և պաշտպանություն «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության կողմից սնանկության վարույթում ներկայացված այլ հայցերի շրջանակներում. *ծառայությունների արժեքի առավելագույն-նվազագույն սահմանաչափը՝ 30,000-50,000 եվրո*					
		5. Բանկերի կողմից բանկային երաշխիքների վճարումը կանխող խափանման միջոցի բողոքարկում. *ծառայությունների արժեքի առավելագույն-նվազագույն սահմանաչափը՝ 30,000-40,000 եվրո*					
		6. Արբիտրաժային համաձայնության կասեցման վերաբերյալ Սնանկության դատարանի որոշման բողոքարկում. *ծառայությունների արժեքի առավելագույն-նվազագույն սահմանաչափը՝ 20,000-30,000 եվրո*					
		7. Խոհրդատվություն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը հատուցման ենթակա ծախսերը «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության կողմից վճարելու հնարավորության վերաբերյալ՝ հաշվի առնելով սնանկության վարույթի ընթացքը /լուծարումը. *ծառայությունների արժեքի առավելագույն-նվազագույն սահմանաչափը՝ 60,000 – 70,0000 եվրո*					

EXHIBIT B
to the state procurement agreement N 11-20
on provision of legal services for state needs

TECHNICAL SPECIFICATION - PROCUREMENT SCHEDULE

EUR

Scope of Services							
Lot number provided for by the invitation	Intermediate code provided for by the procurement plan, according to CPV classification	Technical specification	Measurement Unit	Total Price / EUR	Total Quantity	Delivery	
						Address	Term
1	79141100	The representation of the interests of the Republic of Armenia in the Spanish courts in the framework 1. Strategic advice on the merits on moving forward with parallel actions (arbitration/insolvency): *Fee estimates: EUR 10,000 – 20,000* 2. Recognition of the arbitral award in Spain: *Fee estimates: EUR 30,000 – 50,000* 3. Defence to the ancillary claim regarding the termination of the agreement and the return of the bonds; *Fee estimates: EUR 120,000 – 160,000* 4. Full legal representation of MTAI against other claims by CCC in the insolvency; *Fee estimates: EUR 30,000 – 50,000* 5. Appeals against the injunction that prevented the banks from paying the bond; *Fee estimates: EUR 30,000 – 40,000* 6. Appeals against the insolvency court's decision on the stay of arbitration agreement; *Fee estimates: EUR 20,000 – 30,000* 7. Advice on the feasibility of settling potential debts owed to MTAI in view of status of CCC's insolvency proceedings / liquidation. *Fee estimates: EUR 60.000-70.000*	EUR	420,000	1	The Kingdom of Spain, Madrid	Starting from June 9, 2020 Until the end of the Case

Պատվիրատու՝
Client:
ՀՀ վարչապետի աշխատակազմ
The Office of the Prime Minister of the Republic of Armenia

Աշխատակազմի ղեկավար՝ Էդուարդ Աղաջանյան
Chief of Staff: Eduard Aghajanyan

Կատարող՝
Contractor:
"LINKLATER S.L.P." ընկերություն
"LINKLATERS S.L.P." LLc

Գործընկեր՝ Ֆրանցիսկո Մալագա
Partner: Francisco Málaga

ՀԱՎԵԼՎԱԾ Գ

N 11-20 պետության կարիքների համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

եվրո

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված կարգով												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79141100	Իրավական խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ	-	-	-	-	-	-	105,000*	162,500	220,000	290,000	360,000	420,000	420,000

Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:
**Հարկ է նշել, որ հոկտեմբեր ամսվա ընթացքում կատարված վճարումից կատարվում է 50,000 եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով կանխավճար, որն ենթակա է նվազեցման վերջնական հաշվարկային փաստաթղթում:*

EXHIBIT C

to the state procurement agreement N 11-20

on provision of legal services for state needs

PAYMENT SCHEDULE

EUR

Services															
Lot number provided for by the invitation	Intermediate code provided for by the procurement plan, according to CPV classification	name	The payments shall be processed in compliance with article 5 of the Agreement:												
			January	February	March	April	May	June	July	August	September	October	November	December	Total
1	79141100	Legal Consulting and Information Services	-	-	-	-	-	-	105,000*	162,500	220,000	290,000	360,000	420,000	420,000

The amounts payable are presented in ascending order.

** It shall be noted that the advance payment in the amount of EUR 50,000 equivalent in AMD, from EUR 105,000 payable in July, shall be deducted in the final invoice.*

Պատվիրատու՝
Client:
ՀՀ վարչապետի աշխատակազմ
The Office of the Prime Minister of the Republic of Armenia

Աշխատակազմի ղեկավար՝ Էդուարդ Աղաջանյան
Chief of Staff: Eduard Aghajanyan

Կատարող՝
Contractor:
"LINKLATERS S.L.P." ընկերություն
"LINKLATERS S.L.P." LLC

Գործընկեր՝ Ֆրանցիսկո Մալագա
Partner: Francisco Málaga

ՀԱՎԵԼՎԱԾ Դ
EXHIBIT D

Linklaters

Ֆրանսիսկո Մալագա

«Linklaters» ՍՊԳ
Ալմագրո փողոց 40,
Մադրիդ E-28010
Հեռ.՝ (+34) 91 399 60 00
Ֆաքս՝ (+34) 91 399 60 01
francisco.malaga@linklaters.com

Պրն Է. Աղաջանյան

Աշխատակազմի ղեկավար

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ

Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն. Հայաստանի Հանրապետություն

Կառավարության 3-րդ շենք, Հանրապետության հրապարակ
Երեւան 0010, Հայաստան
Մեկ օրինակը՝

Ե. Կիրակոսյանին

Մարդու իրավունքների եվրոպական դատարանում
Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ

2020 թվականի հոկտեմբերի 14

Այս հաղորդակցությունը գաղտնի է եւ կարող է գաղտնիք կազմել կամ այլ կերպ պաշտպանվել աշխատանքի արդյունքների անձեռնմխելիությամբ: «Linklaters» ՍՊԳ-ն Անգլիայում եւ Ուելսում թիվ OC326345 գրանցման համարով գրանցված սահմանափակ պատասխանատվությամբ ընկերակցություն է: Այն իրավաբանական ընկերություն է, որի գործունեությունը թույլատրվել է եւ կարգավորվում է Իրավախորհրդատուների գործունեությունը կարգավորող մարմնի կողմից: «Linklaters» ՍՊԳ-ի մասով «գործընկեր» եզրույթը վերաբերում է «Linklaters» ՍՊԳ-ի անդամին կամ աշխատակցին կամ «Linklaters» ՍՊԳ-ի խորհրդատուին կամ դրա՝ համարժեք կարգավիճակ եւ որակավորումներ ունեցող փոխկապակցված ընկերություններին կամ կառույցներին: «Linklaters» ՍՊԳ-ի անդամների անունների ցանկն անդամ չհանդիսացող այն անձանց ցանկի հետ միասին, որոնք նշանակված են որպես գործընկերներ, ինչպես նաեւ նրանց մասնագիտական որակավորումները հասանելի են ստուգման համար ընկերության գրանցման վայրում՝ Ուան Սիլք փողոց, Լոնդոն EC2Y 8HQ, կամ «www.linklaters.com» կայքէջում, եւ այդ անձինք համարվում են իրավախորհրդատուներ, գրանցված օտարերկյա փաստաբաններ կամ Եվրոպայում գործող փաստաբաններ: Խնդրում ենք այցելել «www.linklaters.com/regulation» կայքէջը՝ օրենքով նախատեսված մեր պայմանների վերաբերյալ կարեւոր տեղեկություններ ստանալու համար:
A41884355 / 2020 թվականի հոկտեմբերի 14

Հարգելի պարոնայք

Նամակ-համաձայնագիր

Շնորհակալություն Ձեր վերջին ցուցումների համար: Ակնկալում ենք համագործակցել Ձեզ հետ:

Գրում եմ, որպեսզի արձանագրեմ մեր համագործակցության առաջարկվող շրջանակն ու պայմանները:

1. **Համագործակցության շրջանակը**

1.1 Մեզ դիմել են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության (**ՏԿԵՆ** կամ **Հաճախորդ**) համար «Կորսան Կորվիամ Կոնստրուքսյոն ԷՍ.ԷՅ.» ընկերության (**«ԿԿԿ»**) դեմ գործով որպես իրավական խորհրդատու հանդես գալու վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու պահանջով: Սա գտնվում է «Իզոլյուքս Գրուպ» ընկերության մասով սնանկության վարույթի համատեքստում, որում «ԿԿԿ»-ն դուստր ընկերություն է, որի նկատմամբ նույնպես հարուցվել է սնանկության վարույթ (**Գործ**):

1.2 **Այդ Գործը ներառում է՝**

1.2.1 Զուգահեռ գործողություններում (արբիտրաժ/սնանկություն) առաջ շարժվելու հանգամանքների վերաբերյալ ռազմավարական խորհրդատվություն,

1.2.2 «ԿԿԿ» ընկերության դեմ կայացված արբիտրաժային վճռի ճանաչում եւ կատարում,

1.2.3 «ԿԿԿ»-ի դեմ հարուցված սնանկության վարույթի համատեքստում ՏԿԵՆ-ի ներկայացուցչության իրականացում, այդ թվում՝ դրա պաշտպանությունը՝ լրացուցիչ բողոքի եւ «ԿԿԿ»-ի կողմից համաձայնագրի դադարեցման ու որոշ պարտատոմսերի վերադարձի մասով ներկայացված ժամկետի երկարաձգման դեմ, ինչպես նաեւ ցանկացած այնպիսի բողոքի դեմ, որը «ԿԿԿ»-ն կարող է հետագայում ներկայացնել,

1.2.4 Այն կարգադրության բողոքարկումը, որը խոչընդոտ է հանդիսացել իսպանական որոշ բանկերի կողմից ՏԿԵՆ-ին տրամադրված պարտատոմսերը վճարելու համար,

1.2.5 Սնանկության հարցերով դատարանի՝ արբիտրաժային համաձայնագիրը դադարեցնելու վերաբերյալ որոշման բողոքարկում, եւ

1.2.6 Գործին առնչվող աշխատանքային տարբեր հոսքերի վերաբերյալ համապատասխան խորհրդատվություն, այդ թվում՝ խորհրդատվություն՝ ՏԿԵՆ-ի նկատմամբ հավանական պարտքերի կարգավորման իրագործելիության վերաբերյալ՝ հաշվի առնելով «ԿԿԿ»-ի նկատմամբ հարուցված սնանկության/լուծարման վարույթի կարգավիճակը:

1.3 Մենք կարծում ենք, որ ՏԿԵՆ-ի իրավախորհրդատուի բնութագիրը եւ հեղինակությունն այս գործի շրջանակներում կարող է մեծ նշանակություն ունենալ՝ հաշվի առնելով նշանակված դատավորի (հայտնի, ուժեղ անհատականությամբ) եւ սնանկության հարցերով կառավարչի (մեծ փորձառությամբ մասնագետ, որը դատավորի հետ ունի սերտ հարաբերություններ) ներգրավվածության հանգամանքը:

1.4 Այս առնչությամբ նշեմ, որ ես շատ երկարատեւ մասնագիտական հարաբերություններ եմ ունեցել դատավոր պրն Կարլոս Նիետոյի հետ, որին հանդիպել եմ մեր ակադեմիական կարիերայի սկզբում՝ 1993 թվականին: Երկար ժամանակ աշխատել եմ նաեւ պրն Վերայի՝ սնանկության հարցերով կառավարչի հետ: Երկուսն էլ կարող են շատ համոզիչ լինել իրենց տեսակետներում եւ իրավական մեկնաբանման մասով, սակայն միշտ մեծ հարգանք են դրսեւորել իմ եւ իմ ընկերության նկատմամբ: Ուստի վստահ եմ, որ սնանկության վարույթի ժամանակ կկարողանամ բաց եւ բարեկամական կապ հաստատել երկուսի հետ, եւ որ իմ տեսակետները կլսվեն եւ մանրամասն կդիտարկվեն:

1.5 Գործի քննությանը զուգահեռ եւ որպես մեր պարբերաբար խարհրդատվության մաս՝ մենք Ձեզ կտեղեկացնենք ցանկացած առաջընթացի մասին եւ կբացատրենք գործի վերաբերյալ առաջացող ցանկացած հարց: Մենք Ձեզ կտեղեկացնենք նաեւ Գործի հավանական ելքի մասին, այդ թվում՝ կներկայացնենք մեր տեսակետները՝ Գործի մասով անբավարար եզրակացության ռիսկի մասին:

1.6 Սույն նամակի նպատակներով «Դուք» բառը նշանակում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների

նախարարությունը, որը պատասխանատվություն է կրում մեր բոլոր մասնագիտական ծախսերը հոգալու համար:

2. Անձնակազմն ու ռեսուրսները

2.1 Ես հանդես եմ գալու որպես Գործընկեր, որն ամբողջական պատասխանատվություն է կրում Մադրիդում Ձեր եւ ընկերության միջեւ հարաբերությունների ղեկավարման եւ Ձեր գործն ամենօրյա կտրվածքով վարելու համար: Անհրաժեշտության դեպքում իմ կողմից կներգրավվեն իրավաբաններ վեճերի լուծման մեր գրասենյակից եւ այլ ոլորտների գրասենյակներից:

2.2 Սկզբունքորեն ստորեւ թվարկվող իմ գործընկերները կաջակցեն ինձ տվյալ Գործի շրջանակներում.

Անուն	Կարգավիճակ	Բաժին
Ֆրանսիսկո Գարսիմարտին	Իրավախորհրդատու	-
Մարթա դե Կարա	Ավագ իրավաբան	Վեճերի լուծում
Ռենատա Մադարիագա	Իրավաբան	Վեճերի լուծում
Բելեն Կոմբարրոս Գոմես	Կրտսեր իրավաբան	Վեճերի լուծում

Բացի վերը նշված եւ նրանց փոխարինող անձանցից՝ մենք, ըստ անհրաժեշտության, կներգրավենք լրացուցիչ անձանց, այդ թվում՝ փորձնակների՝ Ձեր հրահանգները կատարելու համար:

2.3 Անհրաժեշտություն առաջանալու դեպքում կարող եք ցանկացած ժամանակ անկաշկանդ կապ հաստատել ինձ հետ՝ Գործին առնչվող ցանկացած հարցի կամ մտահոգության կապակցությամբ: Մեր հաճախորդների բողոքների վերաբերյալ ընթացակարգի մանրամասները կարող եք գտնել կից ներկայացվող մեր Բիզնեսի միջազգային պահանջների 15-րդ կետում:

3. Վճարները

3.1 Մեր վճարները հաշվարկվում են ըստ Գործում ներգրավված յուրաքանչյուր փաստաբանի կողմից փաստացի ծախսած ժամանակի, որը տարբերվում է՝ կախված նրանց փորձառության մակարդակից:

3.2 Գործի այս փուլում դժվար է տրամադրել այն վճարների ճշգրիտ նախահաշիվը, որը Դուք կարող եք կրել: Այնուամենայնիվ, հիմնվելով համանման գործերում մեր նախկին փորձի վրա, ակնկալում ենք, որ աշխատանքային յուրաքանչյուր հոսքի համար մեր վճարները կլինեն մոտավորապես հետեւյալ սահմաններում.

Աշխատանքային հոսք	Մոտավոր վճարը
Զուգահեռ գործողություններում (արբիտրաժ/սնանկություն) առաջ շարժվելու հանգամանքների վերաբերյալ ռազմավարական խորհրդատվություն	10,000 - 20,000 եվրո
Արբիտրաժային վճռի ճանաչում Իսպանիայում	30,000 - 50,000 եվրո
Պաշտպանություն՝ համաձայնագրի դադարեցմանը եւ պարտատոմսերի վերադարձին առնչվող լրացուցիչ բողոքի դեմ	120,000 - 160,000 եվրո
«ԿԿԿ»-ի կողմից սնանկության առնչությամբ ներկայացված այլ բողոքների դեմ ՏԿԵՆ-ի լիարժեք իրավաբանական ներկայացուցչություն (գումարն ըստ լրացուցիչ բողոքի՝ կախված դրա բարդությունից)	30,000 - 50,000 եվրո
Այն կարգադրության բողոքարկումը, որը խոչընդոտ է հանդիսացել բանկերի կողմից պարտատոմսերը վճարելու համար	30,000 - 40,000 եվրո
Սնանկության հարցերով դատարանի՝ արբիտրաժային համաձայնագիրը դադարեցնելու վերաբերյալ որոշման բողոքարկում	20,000 - 30,000 եվրո
Խորհրդատվություն ՏԿԵՆ-ի նկատմամբ հավանական պարտքերի կարգավորման իրագործելիության վերաբերյալ՝ հաշվի առնելով «ԿԿԿ»-ի նկատմամբ հարուցված սնանկության/լուծարման վարույթի կարգավիճակը	60,000 - 70,000 եվրո
Մոտավոր գումարը	**300,000 - 420,000 եվրո**

3.3 Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս նախահաշիվը սահմանվել է՝ հիմնվելով համանման գործերում մեր նախկին փորձառության եւ այն ենթադրության վրա, որ ժամանակի կամ աշխատանքի ծավալի առումով արտասովոր շեղումներ չեն առաջանա: Քանի որ նախահաշիվը սահմանված է, մենք կտեղեկացնենք Ձեզ աշխատանքային բոլոր հոսքերի զարգացման մասին եւ թարմացված տեղեկություններ կտրամադրենք ցանկացած ժամանակ առաջացած վճարների մասին:

3.4 Բացի այդ, մեր կողմից վճարներ են գանձվելու այլ ծառայությունների եւ հատկացումների համար՝ մեր Բիզնեսի միջազգային պահանջների 2.2 կետում նկարագրված կարգով:

3.5 Վճարների եւ հաշիվների եւ վճարման պայմանների վերաբերյալ լրացուցիչ մանրամասները ներկայացված են մեր Բիզնեսի միջազգային պահանջների 3-րդ եւ 4-րդ կետերում:

3.6 Մենք յուրաքանչյուր ամիս Ձեզ կուղարկենք մեր ծառայությունների հաշիվ-ապրանքագրերը:

3.7 Մեզ անհրաժեշտ է նաեւ 50.000 եվրո կանխավճար՝ Գործի ընթացքում առաջացած ծախսերը հոգալու համար, որը կհանվի մեր վերջնական հաշիվ-ապրանքագրից:

4. Ծախսերը

Բացի սահմանված վճարներից՝ մեր կողմից կգանձվեն վճարներ բոլոր այն ծախսերի համար, որոնք կառաջանան մեր աշխատանքի ընթացքում, այդ թվում՝ գործի շրջանակներում Ձեզ աջակցելու համար անհրաժեշտ ցանկացած պաշտոնական փաստաթղթի, լիազորագրերի տրամադրման, դատական ներկայացուցիչների ծառայությունների, գործուղումների եւ այլնի համար:

5. Շահերի բախում

Ձեր հատուկ ուշադրությունն ենք հրավիրում մեր Բիզնեսի միջազգային պահանջների 7-րդ կետին:

6. **Գաղտնիությունը**

Խնդրում ենք նկատի ունենալ, որ սույն նամակի (վճարների մասով կարգավորումները) 3-րդ կետում եւ մեր Բիզնեսի միջազգային պահանջների 6-րդ կետում նշված տեղեկատվությունը (համամասնության սկզբունքով) գաղտնի է «Linklaters»-ի համար եւ կշարունակի համարվել այդպիսին սույն նամակի ամսաթվին հաջորդող չորս տարիների ընթացքում:

7. **Պատասխանատվության սահմանափակումները**

Ձեր հատուկ ուշադրությունն ենք հրավիրում մեր Բիզնեսի միջազգային պահանջների 9.3-րդ կետին:

8. **Զգուշավորություն ցուցաբերելու պարտականությունը**

Համաձայն ենք սույն նամակում նշված, Գործին առնչվող մեր պարտականությունները կատարել բարեխղճորեն եւ այն չափորոշիչներին համապատասխան, որոնք Դուք ողջամտորեն ակնկալում եք այնպիսի իրավաբանական ընկերությունից, ինչպիսին մերն է, ինչպես նաեւ մեր մասնագիտական ու իրավական պարտավորություններին համապատասխան:

9. **Իրավազորությունը եւ կարգավորող օրենսդրությունը**

Գործը կարգավորվում է Հայաստանի օրենսդրությամբ, եւ Գործից բխող կամ դրա հետ կապված՝ Կողմերի միջեւ առաջացող ցանկացած վեճ ենթակա է Հայաստանի դատարանների բացառիկ իրավազորությանը՝ բացառությամբ եւ միայն այնքանով, որքանով այն կհակասի համապատասխան իրավազորության ներքո կիրառելի օրենսդրությանը կամ կանոններին:

10. **Բիզնեսի պահանջները**

Խնդրում ենք նկատի ունենալ, որ կից ներկայացվող Բիզնեսի միջազգային պահանջները կազմում են սույն նամակի մասը («**Հաճախորդի հետ**

հարաբերությունների պայմաններ»-ի հետ միասին): Հաճախորդների հետ հարաբերությունների այս պայմանները տարածվում են բոլոր այն հարցերի վրա, որոնց վերաբերյալ Դուք կամ Ձեր խմբի ցանկացած անդամ կարող է մեզ հրահանգներ տալ աշխարհի ցանկացած մասում՝ բացառությամբ եւ այն սահմաններում, որ սահմաններում ձեռք է բերվել այլ համաձայնություն: Եթե սույն նամակում նշված պայմանները հակասում են կից ներկայացվող մեր Բիզնեսի պահանջներում ներառված պայմաններին, ապա գերակայում են սույն նամակի պայմանները:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ սույն նամակ-համաձայնագիրը հստակորեն արտացոլում է Գործի հետ կապված մեր համաձայնագրի շրջանակն ու պայմանները՝ երախտապարտ կլինեի, եթե Դուք պաշտոնապես հաստատեիք ՏԿԵՆ-ի կողմից Հաճախորդների հետ հարաբերությունների պայմանների ընդունումը՝ ստորագրելով եւ վերադարձնելով կից ներկայացվող կրկնօրինակը կամ հաստատելով Ձեր կողմից պայմանների ընդունումը պատասխան էլեկտրոնային նամակով: Մինչեւ ստորագրված կրկնօրինակը կամ հաստատող էլեկտրոնային նամակը ստանալը մենք կսկսենք աշխատել Գործի վրա՝ սույն նամակ-համաձայնագրի պայմաններին համապատասխան, հետեւապես խնդրում եմ հնարավորինս շուտ տեղեկացնել ինձ՝ արդյո՞ք առկա է որեւէ այնպիսի հարց, որն ընկերությունը կցանկանար հասցեագրել ինձ:

Հարգանքով՝

[*ստորագրություն*]

Պրն. Ֆրանսիսկո Մալագա

Քաղաքացիական դատավարության, արբիտրաժի եւ սնանկության հարցերով հաստիքային պրոֆեսոր

Գործընկեր

Վեճերի լուծման Մադրիդի գրասենյակ

Առդիր՝ Բիզնեսի միջազգային պահանջներ

Linklaters

Francisco Málaga

Linklaters, S.L.P.
Calle Almagro, 40
E-28010 Madrid
Telephone (+34) 91 399 60 00
Fax (+34) 91 399 60 01
francisco.malaga@linklaters.com

Mr. E. Aghajanyan
Chief of Staff
Office of the Prime Miniester of the Republic of Armenia
Ministry of Territorial Administration and Infrastructure - Republic of Armenia
Government House 3, Republic Square
0010 Yerevan – Armenia

With copy to
Y. Kirakosyan
General International Counsel for the Republic of Armenia

14 October 2020

Dear Sirs,

Engagement Letter

Thank you for your recent instructions. We very much look forward to working with you.

I am writing to record the proposed scope and terms of our engagement.

1 Scope of the engagement

1.1 We have been requested to submit our proposal to act as legal adviser to the Ministry of Territorial Administration and Infrastructure of the Republic of Armenia (the "**MTAI**" or "**Client**") against Corsan Corviam Construccion, S.A. ("**CCC**"). This is in the context of the insolvency proceedings relating to the Isolux Group, in which CCC is a subsidiary also subject to insolvency proceedings (the "**Matter**").

1.2 This Matter will include:

1.2.1 Strategic advice on the merits of moving forward with parallel actions (arbitration / insolvency);

1.2.2 Recognition and enforcement of an arbitral award against CCC;

This communication is confidential and may be privileged or otherwise protected by work product immunity.

Linklaters LLP is a limited liability partnership registered in England and Wales with registered number OC326345. It is a law firm authorised and regulated by the Solicitors Regulation Authority. The term partner in relation to Linklaters LLP is used to refer to a member of Linklaters LLP or an employee or consultant of Linklaters LLP or any of its affiliated firms or entities with equivalent standing and qualifications. A list of the names of the members of Linklaters LLP together with a list of those non-members who are designated as partners and their professional qualifications is open to inspection at its registered office, One Silk Street, London EC2Y 8HQ or on www.linklaters.com and such persons are either solicitors, registered foreign lawyers or European lawyers.

Please refer to www.linklaters.com/regulation for important information on our regulatory position.

1.2.3 Representing the MTAI in the context of the CCC insolvency proceedings, including its defence against the ancillary claim and its extension brought by CCC regarding the termination of an agreement and the return of certain bonds and against any other claims that CCC may bring in the future;

1.2.4 Appeals against the injunction that prevented certain Spanish banks from paying bonds granted to the MTAI;

1.2.5 Appeals against the insolvency court's decision on the stay of the arbitration agreement; and

1.2.6 Related advice on different workstreams in relation with the Matter, including advice on the feasibility of settling potential debts owed to the MTAI in view of the status of CCC's insolvency proceedings / liquidation

1.3 We consider that the profile and reputation of the MTAI's legal counsel in this matter could make a real difference, considering the assigned judge (well-known, with a strong personality) and the insolvency administrator (a highly experienced professional with a very close relationship with the judge).

1.4 In this regard, I have a very long-standing professional relationship with the judge Mr. Carlos Nieto, who I met at the start of our academic career back in 1993. I have also worked extensively with Mr. Vera, the insolvency trustee. Both can be very forceful in their views and legal interpretation but have always shown great respect for me and my firm. I am therefore confident that I will be able to engage in open and friendly communication with both during the insolvency proceedings, and that my views will be heard and carefully considered.

1.5 As the Matter proceeds and as part of our recurrent advice, we will keep you informed of any progress and explain any related issues which arise. We will also keep you informed of the likely outcome of the Matter, including our views on the risk of the Matter not concluding satisfactorily.

1.6 For the purposes of this letter, "you" means the Ministry of Territorial Administration and Infrastructure of the Republic of Armenia, which shall be responsible for settlement of all our professional charges.

2 Staffing and resources

2.1 I will be the Partner with overall responsibility for managing the Firm's relationship with you in Madrid and for day-to-day conduct of your case. I will involve associates from our dispute resolution practice and from other practice areas whenever necessary.

2.2 By way of principle, my colleagues listed below will assist me in the Matter:

Name	Status	Department
Francisco Garcimartín	Legal consultant	-
Marta de Cara	Managing Associate	Dispute Resolution
Renata Madariaga	Associate	Dispute Resolution
Belén Combarros Gómez	Junior associate	Dispute Resolution

In addition to or substitution for those above, we will involve additional persons as we consider necessary to carry out your instructions, including trainees.

2.3 Please feel free to contact me at any time about any aspects or concerns relating to the Matter should the need arise. For details of our client complaints procedure, please see paragraph 15 of our International Terms of Business attached.

3 Fees

3.1 Our fees are calculated according to the time actually spent by each lawyer involved in the Matter, which varies depending on their level of experience.

3.2 At this stage of the Matter, it is difficult to provide an accurate estimate of the fees which you might incur. However, based on our previous experience in similar matters, we would expect our fees for each workstream to be approximately between the following ranges:

Workstream	Fee estimate
Strategic advice on the merits of moving forward with parallel actions (arbitration / insolvency)	€10,000 - €20,000
Recognition of an arbitral award in Spain	€30,000 - €50,000
Defence to the ancillary claim regarding the termination of the agreement and the return of the bonds	€120,000 - €160,000
Full legal representation of MTAI against other claims by CCC in the insolvency (amount per additional claim, depending on its complexity)	€30,000 - €50,000
Appeals against the injunction that prevented the banks from paying the bonds	€30,000 - €40,000
Appeals against the insolvency court's decision on the stay of the arbitration agreement	€20,000 - €30,000
Advice on the feasibility of settling potential debts owed to MTAI in view of status of CCC's insolvency proceedings / liquidation	€60,000 - €70,000
Approximate total	**€300,000 - €420,000**

3.3 Please note that these estimates have been established on the basis of our previous experience in similar matters and on the assumption that no extraordinary deviations occur in terms of time or volume of work. As they are estimated, we will keep you informed about the development of all workstreams and updated on the fees incurred at any time.

3.4 In addition, we will charge for other services and disbursements, as described in paragraph 2.2 of our International Terms of Business.

3.5 Further details as to Fees and Billing and Payment Terms are contained in paragraphs 3 and 4 of our International Terms of Business.

3.6 We will invoice you for our services on a monthly basis.

3.7 We would also require an advance of €50,000 to cover costs during the Matter and which would be deducted from our final invoice.

4 Expenses

In addition to the fees established, we would also bill for all expenses incurred during our work including any official document needed, granting of powers of attorney, court agent services, trips etc. needed to assist you on the matter.

5 Conflicts of Interest

Paragraph 7 of our International Terms of Business is drawn specifically to your attention.

6 Confidentiality

Please note that the information in paragraph 3 of this letter (fee arrangements) and paragraph 6 of our International Terms of Business (proportionality) is confidential to Linklaters and will remain so for a period of four years from the date of this letter.

7 Limitations on Liability

Paragraph 9.3 of our International Terms of Business is drawn specifically to your attention.

8 Duty of Care

We agree to perform our obligations set out in this letter in connection with the Matter with diligence and in accordance with the standards you can reasonably expect from a law firm such as ourselves and in compliance with our professional and legal obligations.

9 Jurisdiction and governing law

The Matter is subject to Armenian law and any dispute between the Parties arising out of or in connection with the Matter will be subject to the exclusive jurisdiction of the courts of Armenia except to the extent that this would contravene applicable law or rules in a relevant jurisdiction.

10 Terms of Business

Please note that the enclosed International Terms of Business form part of this letter (together the "**Client Relationship Terms**"). These Client Relationship Terms will apply to all matters on which we may be instructed anywhere in the world by you or any member of your group, except to the extent agreed otherwise. If the terms set out in this letter conflict with those contained in our enclosed Terms of Business, the terms of this letter will prevail.

On the basis that this letter agreement correctly reflects the scope and terms of our agreement in connection with the Matter, I would be grateful if you would formally confirm the MTAI's acceptance of the Client Relationship Terms by signing and returning the duplicate enclosed or by confirming your acceptance by return email. Pending

receipt of the signed duplicate or confirming email, we shall start work on the Matter in accordance with the terms of this engagement letter, so please let me know as soon as possible if there are any issues which the company would like to raise with me.

Yours sincerely

Mr. Francisco Málaga
Tenured professor of Civil Procedure, Arbitration and Insolvency
Partner
Dispute Resolution Practice Madrid

Enc. International Terms of Business